

նուի հոն, այնու որ թարգմանութիւնը կատարուած է անկաշխանդ: Մարտիրոս անունը երիցս գրուած է «Մարտիրի», ինչպէս սովոր են կոչել Վրացիք:

Կեանքի եւ քաղաքացիական երանելի սուրբ հարմար մերոյ Յովհաննու, հարմար Սիմեի, որ կոչի Կղիմաս, գոր գրեաց Դանիէլ կրտսնաւորն Սիւնակեաց<sup>17</sup> Ռայիք(ու)ոյ լեռինն:

Ոչ է կարող բանք իմ, ով սիրելի եղբարք, պատմել թէ ո՞ր էր քաղաք, յորում ծնաւ եւ սնեալ եղեւ ախոյեան զաւրականս այս աստուածապաշտութեան, յառաջ քան զմտանելն իւր ի ճշնութեան ասպարէզն վասն զի ոչ կարացի գիտել ճշմարտութեամբ: Իսկ եթէ ո՞ր է քաղաք, յորում այժմ բնակի եւ անմահական երանութեամբն փառիկանայ երանելին այն, ոչ անգիտանամ: Զի բնակեալ է ի քաղաքն յայն, ուր բնակչութիւն այնոցիկ է, զորս բարձրաձայն փողն եկեղեցւոյն Քրիստոսի Պաւղոս քարոզէ, եթէ նոցա որոց քաղաքավարութիւնն յերկինս է. անդ կեայ երանելիս այս եւ զուարճանայ իմանալարար յանյազելի բարութիւնն եւ զանտեսանելի զեղեցիկութիւնն եւ զանհասելին մտաւք տեսանէ. եւ արժանի բառ քրտանց իւրոց վարձս սիրի ի վերայ նորա. եւ վասն աշխատութեան իւրոց առեալ է պատիւ զարքայութիւնն երկինց. եւ է եւ եղիցի յաւիտեանս ի նմա, որոյ ոտքն կացին յազգութիւն: Իսկ եթէ որպէս ընդ աննիւթն միաւորեցաւ նիւթականս այս, պատմեմ ձեզ:

էր սա վեշտասան ամի մարմնոյ հասակաւ, ամենազովս եւ բիւրաւոր ամաց մտաւք եւ իմաստութեամբ, յորժամ մատոց զանձն իւր ընծայս կամաւորական եւ պատարագ մեծի քահանայապետին Քրիստոսի, առ որ ընծայեաց զմարմին իւր ի լեւոն Սինեայ եւ զհոգին իւր ի լեւոն երկինց: Եւ այսպէս ի ձեռն աստարութեան, որ է առաջնորդ ամենայն առաքինութեանց, զախոս համարձակութեանն յարմատոց խղեաց յիւրմէ եւ ասացաւ խոնարհութիւն յոյժ. եւ արտաքսեաց զխարոզական ախտ ինքն անարէնութեան եւ զհետեւումն կամաց իւրոց. քանզի խոնարհեցոց զպարանոցն ընդ հոգեւոր վարդապետան, որպէս զի անաշխատ եւ առանց

աշխոյժութեան ընթացի նա ի ծով խիստ սպառ կենցաղավարութեանս. եւ այնպէս հնազանդեաց զանձն իւր առաջնորդին, իբր եթէ անբան է եւ հեռացեալ ի կամաց հոգեւորութիւն: Եւ սքանչելի այս էր, եթէ այն, որ ուսեալ էր զամենայն իմաստասիրական եւ զհոնեորական գերկոտասան ուսումն, զիւրք աշակերտեցաւ մարդոյ պարզամտի, որ անգէտ էր այնու ամենայնի. եւ յետ հնազանդելոցն երկնային խորհրդով եւ առաքինութեամբ եւ խոնարհութեամբ՝ հալածեաց յիւրմէ զիմաստասիրութեան հպարտութիւնն. եւ կոչէր վարդապետին իւրոյ, որ եւ հարթեաց դնա, Մարտիրի, որ բնակեալ էր ներքապոյն քան զսուրբ հայրն Անտոն, որ մերձ է ի ծովն Կարմիր: Յայնժամ եկեալ հեթանոսք ի վանք սոցա, որ բնակեալ էին ի լեռինս մերձ նոցա. եւ աւարեալ զվանսն՝ սպանին ի հարանցն անձինս վեց. եւ միոյ ի սպանելոցն կոչէր Կոնոն, որ եւ զճաճկեալան զիտէր եւ շնորհք մարդարէութեան ունէր յԱստուծոյ: Իսկ հայրն Մարտիրի առեալ զմարմինս նոցա եւ եղ ի փոքր այրի ինչ եւ ծեփեաց զզուռն այրին կրով եւ վիմաւք մեծամեծաւք, եւ զրեաց ի վերայ զանուանս նոցա մինչեւ թաղեցէ զնոսա: Եւ զկնի երկուց աւուրց զալ տեսանել զտեղին, զի մի զպանն ինչ փորեցէ զնոսա. եւ կամէր թաղել. եւ եղիտ զզուռն պահեալ զզուռնութեամբ եւ զիրն ամբողջ ի վերայ. եւ բացեալ եմուտ ի ներքս, զի առեալ թաղեցէ զնոսա: Եւ մինչ եմուտ, ոչ զտաւ երկուս ի մարմնոց նոցա. զի փոխադրեաց զնոսա Աստուծոյ ուր եւ կամեցաւ. եւ էին փոխադրեալ մարմինն արբա Կոնոնի եւ այլոյ եղբաւր մեծի ումեմն: Իսկ մեք յառաջի բանն եկեցուք:

Քանզի յորժամ հայրն Յովհաննէս կրտսնաւոր եղեւ վեշտասան ամաց զոլով, եւ տարաւ զնա հայրն Մարտիրի ընդ ինքն առ արբա Յովհաննէս, որ բնակեալ էր յարտաքին յանապատն Կեղարու. եւ աշակերտն իւր Ստեփաննէ ընդ ինքն բնակէր: Եւ իբրեւ ետես զնոսա ծերն, յարուցեալ արկ ջուր ի կոնք եւ լուաց զոտս նորա. եւ ոչ էլուաց զոտսն Մարտիրի: Իբրեւ ետես Ստեփաննէ աշակերտ ծերոյն, զայթակղեցաւ ընդ միտան եւ ընդ եղեալ զորձս: Եւ իբրեւ զնաց արբա Մարտիրի եւ աշակերտն իւր, գիտէր ծերն Յովհաննէս զի ծածկադէտ էր, եթէ զայթակղեալ էր ընդ միտս աշակերտն իւր, եւ ասէ. Ստեփաննէ, ընդէ՞ր զայթակղեալ ես,

<sup>17</sup> Այսպէս Ե. իսկ D Մենակեաց Ռուբայ 1. E 1915 միայնակեաց Ռուբայի 1. E 1924, Vat. Մենակեաց Ռուբայ 1:

որդեալ. ճշմարիտ ասեմ քեզ, ոչ զիտեմ զմանուկս զսա. այլ առաջնորդ լերինն Սինեայ եկն եւ ես զոտս առաջնորդին լուացի: Որ եւ զկնի ՍԳ. ամաց առաջնորդ եղեւ լեռինն Սինեայ, որպէս ասաց ծերն: Եւ ոչ եթէ ծերս միայն մարդարէացաւ վասն սորա, այլ եւ Ստրատի միայնակեացն, որ ոչ երբեք էլեալ էր ի սենեկէ իւրմէ |||:

Վ. (բառ D) ի ներքոյ խրատք տեսութեան ի փառս անեղին Աստուծոյ:

Լուծմունքի դժուարիւմաց եւ նուրբ բանից որ կան ի գիրքս յայս կոչեցեալ Կիւմաս, արարեալ Դանիէլի<sup>18</sup>, վասն ելիցն յաշխարհ:

Ա. Զինչ է ուրացումն եւ ատելութիւն: Այլ զայս ուսուցանէ...

Բ. Վասն Անհոգութեան: Որ ի բարկութիւն եւ ի չարակրութիւն անշիտութիւն...

Գ. Վասն Հնազանդութեան: Դատողութիւն ի բաց զուրմն...

Դ. Վասն Ապաշխարութեան: Ինքն զատեալ եւ ինքն...

Ե.—ԺԵ. Վասն յիշատակի մահուան, սոցոյ, բամբասողութեան, ստուրթեան, չար տիկնոջ որովայնին, անապականութեան, անմտութեան, արթնութեան, անախտութեան, հայհոյութեան, խոնարհութեան:

ԺԶ. Վասն Դատողութեան խորհրդոց: Ութ են ազգային խորհուրդք...

ԺԷ.—ԺԹ. Վասն Հանդարտելոցն, Աղաւթիցն, Անախտութեան:

Վ. «Դատարկացեալք ի գործոց չարեաց եւ գործողք չարեաց»: (D 70, թղ. 301ա—334բ, Յուց., էջ 85):

Ձեռագիրք Ա. եւ Բ. Յաւելուամեքու: Բեթլին, Թ. 25, 229բ—231բ (1361. ա. թերի): Էջմիածին, 1925 (1401): 1924 (1653): 1926 (1660): 1927 (1657): 1928 (1760): Դաղեան, 70, 291բ—334բ (1329. Յուցակ, էջ 85): Վատիկան, Borg., 75, 173ա (Tisserant, 135—136): Եւ այլն:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱՎԱՆ - ՎԱՆԻ ՎԱՆՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ ԶԱՆԵՉԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Շարունակութիւն):

23. ԳՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՁԵՆԱԳԻՐՆԵՐ

Նախնիներէ մեզի հասած սրբազան եւ կուրծք ուռցնող ժառանգութիւն նկատած ենք արդարեւ հայերէն այն բազմաթիւ Ձեռագիրները, որոնք այսօր մեր ձեռքը հասած են եւ Մատենադարաններու հարստութիւնը կը կազմեն: Անոնք, զուրէ կարելի ըլլայ արտայայտուիլ, փոքրիկ մասն են այն ճոփ գրականութենէն ու փութաջան արդիւնաբերութենէն, զոր յաջորդներու կտակեցին — «Ձեռքս հողանայ՝ զիրս մնայ»: Եւ անոնց պահպանումը յանձնարարեցին ու նոյն իսկ անէժքով պարտադրեցին՝ «Պատիժս ընդ կայէնի առցէ», կամ «Ընդ Յուզայի պատժեացի»:

Վաստորականցի վանականը զրքեր արտագրելու եւ զանոնք զեղեցիկ նկարներով ու զարդերով օժտելու, նմանապէս ամուր կազմով պահպանելու մէջ տիպար օրինակ կը հանդիսանայ: Արժանի է զովասանքի եւ երախտագիտական զգացումներու փոխարկնութեան:

Միւլթար Սասնեցին էր «Վարժ յարուեստս զընդութեան եւ ի ծաղկազարդ նկարակերտութիւնս զրոց» (ՎՎՎ., Բ., էջ 425): Ստուգիւ պատկառանքով ու լոկ հիացումով կ'արժէ արձանանալ Յովհաննէս Մանգասարենցի առջեւ՝ «Եւ արդ զրեալ եղեւ Յովհաննու զլուխն ձեռամբ վարպետին իմոյ տէր Յովանիսի Մանգասարենց քաջ քարտողին, որ ՀԲ տարի ամառն եւ ձմեռն գիշեր ու ցերեկ ի զրել եկաց: Որ զրեալ եղեւ ձեռամբ նորա Ս (Յ)այսմաւուրք եւ Տարեզիւրք, ձառ եւ Սարգիս գիրք: Իսկ փոքր գիրք, տետր, հաղթամատոց (թէ՛ Հ. աղթամատոց), շարակնոց եւ սարմուսարան, մաշտոց եւ զանձատետր ԾԿ (= 54?) եւ այլ աւելի եւ Աւետարանս ԼԲ: Եւ զայս Յովհաննու զլուխ՝ ի ծերութեան ժամանակ, որ աչք չէր հայիլ եւ ձեռքն կու գողայր — բազում չարչարանք հաղիւ կարաց աւարտել — այլ չկարաց զրիչ բռնել մինչ ի վաղձան, որ հանգեաւ ի Քրիստոս ԶԶ ամաց» (Լաւրայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 619—620):

<sup>18</sup> Այսպէս D. իսկ էջմ. 1924, 1925, Vat. «Գրաւնաւորի Ռայիթեցոյ»:

Մեր գրութեան մէջ ստէպ յիշատակելու պատճառով ընտանեացի Վասպուրականի մէջ արտագրուած Ձեռագրերը: Կարելի է անոնց վրայ դեռ ուրիշներ յաւելուլ՝ Կտուցի մէջ 1455ին եւ 1470ին կը գրուին մէկ մէկ Աւետարաններ (Բանասէր, 1905, էջ 20-Փոնջ, 1891, Թ. 227):

Աղթամարի 60 մէջ ՋԸ թուին «Ծաղիկ» Աւետարանը եւ ՋՊԶ թուին ուրիշ Աւետարան մը կը գրուի (Սուրհանդակ, 1901, Թ. 600, Բաղմաժէպ, 1905, էջ 493):

Կապուտկոզի Ս. Յակոբի վանքի մէջ Սաղաթիէլ 1577ին Աւետարան մը կը գրէ ու կը մաղթէ յիշել՝ Սիմէոն Եպիսկոպոսը, Բարսեղ Եպիսկոպոսը, Եղիշէ, Ոսկան, Բարսեղ եւ Սարգիս կրօնաւորները (Հմմտ. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 687):

Լիւի մէջ 1530ին Յովսէփ Աղթամարցիին Մաշտոց մը կը գրէ (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Խապայեանի Երուսաղէմի հայ. Ձեռագրաց ցուցակէն, Թ. 302) եւ 1748ին Պետրոս Գ. Տաթևացիի Մատթէի մեկնութիւնը (անդ, Սաւալանեանի նոյնի ցուցակին, Թ. 70):

Հոն Յովհաննէս արեղան Քարողիք մը 1850ին կ'արտագրէ, իսկ 1835ին Ստեփան Լինեցիին Քարողիք մը կը ստանայ (Մճրատեան, Գեղարքունիք, էջ 411):

Դաւիթ 1655ին Կտուցի մէջ Աւետարան մը կ'արտագրէ (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Խապայեանի Երուսաղէմի հայ. Ձեռագրաց ցուցակէն Թ. 2061):

Խորհրդամատոյց մը կը գրուի 1599ին՝ «Եկարու վանս» (Հացունի շ. Վ., Պատարագամատոյց, Վենետիկ 1936, էջ 9):

«Ակիոյ» վանքի մէջ 1596ին կ'աւարտի Շարակնոցի մը արտագրութիւնը (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Սաւալանեանի Երուսաղէմի հայ. Ձեռագրաց ցուցակէն Թ. 1613):

Այրիճորի անապատի մէջ 1311 կ'արտագրուի Աւետարան մը (անդ. Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Բէյրութ):

«Ի նահանգիս Ընդշտունեաց յանապատիս, որ սուրբ սուրբ Գէորգ կոչի» Սիմէոն

60 Աղթամարի մէջ գրուած քանի մը ձեռագրերն են նկատմամբ ճշդում մը՝ Վ.Վ. Ս. մասին մէջ էջ 117 սող երեքէն սկսած ըլլալու է՝ «1448ին Ներսէս արեղայ՝ Աւետարան մը եւ Գրիգոր՝ զարծեալ Աւետարան մը» (Նոտաք, էջ 159 եւ Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 404) եւ 1449ին ու 1452ին Գրիգոր՝ Աւետարան (Արծուի Վասպ. 1859, էջ 182. Լալայեանց, անդ, էջ 414-416):

կը գրէ Դիոն. Արիստղազացիի գործերը (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Երուսաղէմ Սաւալանեանի ցուցակէն):

«Յանադատին Մեծոփայ վանք կոչեցեալ» Յովհաննէս 1332ին Ես. Նչեցի Եղեկիէլի մեկնութիւնը կը գրէ (անդ. Թ. 1159, 1392): Միեւնոյն վանքի մէջ յառաջնորդութեան տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի» 1420ին Պետրոս արեղան Շարակնոց մը կը գրէ (Ակինեան շ. Ն., Հաւաք. յիշատ. Խապայեանի Երուսաղէմի հայ. Ձեռագրաց ցուցակէն Թ. 1718) Ներսէս կը գրէ 1566ին Մաշտոց մը, որ «ոխֆ ի դուռն Սուրավանից» կը տրուի (Ակինեան անդ, Թ. 697): «Ի քարանձաւ անապատս որ կոչի Արդեւան» Մկրտիչ վարդապետ 1420ին Հաւաքածոյ մը կ'արտագրէ (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Սաւալանեանի Երուս. հայ. Ձեռ. ցուց. էն Թ. 1574): Կարապետ արեղան կը ստանայ Գրիգոր գրչէն «ի դուռն սուրբ Աստուածածնիս որ կոչի Ծիրանաւոր... 1634ին գրած Ոսկեփորիկը եւ զայն կը ղնէ՝ ի դուռն Արդեւանայ...» ու կը մաղթէ յիշել «դ՛հայր վանաց զԱրրահամ արքեպիսկոպոս եւ զմեծն Տէր Սիմէոն, ... զտէր Կիրակոսն, զտէր Զաքարէն, զտէր Գալուստն, զտէր Յովհաննէսն եւ զայլ միարան եղբայրքն...» (Միոն 1933, էջ 422-423):

Գրիգոր գրիչ «առ ոտս սուրբ Առաքելոցս» կ'աւարտէ 1426ին դաւանարանական գրութեան մը արտագրութիւնը (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Սաւալանեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. ցուցակէն. Թ. 1582):

Գրիգոր՝ Կարմրաւորի մէջ 1602ին կ'արտագրէ Քերական մը՝

«Փառք... որ ետ կարողութիւն անարի եւ տիմար գրչի Գրիգորի (Մովսէս) հասանել յաւարտ... Քերականիս ի դառն եւ ի նեղ ժամանակիս ի յերկիրս Վասպուրականի ի սուրբ ուխտս, որ Կարմրաւոր կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Զաքարիա վարդապետին, որ լաւ հարկիք արար մեզ եւ պահեաց զմեզ ի գործ գրչութեան, ի թուականիս Հայոց ՌԾԱ, յիշատակ արի քաջ վարդապետին տէր Հայրապետ բարունոյն եւ աշակերտեալ մանկանն իւրոյ տէր Ներսէս նորաբողոք ծաղկին...»

եւ իւր ուսուցանողին տէր Բարսեղ աշխարհաւորս եւ տիեզերալուր քաջ եւ արի անյաղթ փիլիսոփային...» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Սաւալանեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. ցուցակէն Թ. 1311):

Խիզանի Ս. Նշան վանքի մէջ Կարապետ 1624ին կը գրէ Աւետարան մը՝

«Փառք... (ի խնդրոյ Դաւիթ Եպիսկոպոսի՝ որդւոյ Սարգսի) ես յետինս ի կարգաւորաց... Կարապետ արեղայ... կատարեցի զսուրբ Աւետարանս ի մեծ թուականիս Հայոց ՌՅԲ ի յերկիրս Խիզանայ ընդ հովանեաւ ամենասուրբ Նշանիս եւ նշխարաց սրբոց Հովիսիմեանցն, որ աստ եղեալ կան... ի հայրապետութեան... (խնդրէ յիշել) զհոգեւոր հարքն իմ զտէր Ղազար կրօնաւորն եւ զտէր Գրիգոր վանից հայր, զՈվսէփ Եպիսկոպոս, զՆերսէս վարպետն եւ զտէր Միքայէլ քահանայն եւ զեղբայրակիցն իմ զտէր Ներսէս եւ զտէր Սահակն, որ յայսմ ամի զարտմութիւն իմ նոքա միւլթարեցին: Եւ զմիաբանք սուրբ ուխտիս զմահաբախ տէր Մարգարէն եւ զմիւս մահաբախ տէր Արսէն, զտէր Ներսէս, զտէր Գրիգոր, զտէր Յովհաննէս, զտէր Միլթար, զտէր Սաշատուր, զտէր Յակոբն, որ մահ տարածամ փոխեցաւ առ Աստուած...» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Խապայեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. ցուցակէն Թ. 996),

Բարսեղ վարդապետը 1607ին Մատթ. Պարթեւի Գործոց մեկնութիւնը կը գրէ «... ի դուռն մօրն Լուսոյ Աստուածածնին եւ Յովհաննու Կարապետին եւ սուրբ Ստեփաննոս Նախավկային...» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Սաւալանեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. ցուցակէն 1165):

«Ի վանքն Ամիրոյուն» Յակոբ Երէց 1689ին Պատմադիրք մը կ'արտագրէ (անդ. էջմ. 1896):

«Ի վանքն Ամիրոյուն» Արրահամ 1690ին ճառերու հաւաքածոյ մը կը գրէ (անդ, անունած Սաւանալեանի Երուսաղէմի հայ. Ձեռագրաց ցուցակէն, Թ. 1469): Նոյն Արրահամ 1697ին հոն Գրիգոր Տաթևացի Մատթէոսի եւ Յովհաննէսի Աւետարաններու մեկնութիւնները կը գրէ (Ն. Մառ, Յուլ. հայ. Ձեռ. Սեւանայ, էջ 25):

Կարապետ Գոմոց վանքի մէջ 1477ին Շարակնոց մը կը գրէ «Փառք... կատարե-

ցաւ եղանակաւոր տառս շարունական (Շարական) ի թուականիս Հայոց ՋԻԶ (1477) ի մայրաքաղաքս Բաղէշ ի սուրբ ուխտս Գոմաց ի դուռն սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գէորգիս զաւրաւարիս ի սուրբանութեան Հոսան բակին եւ ի կաթողիկոսութեան տէր Յովհաննիսի եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Թումայ արհի-Եպիսկոպոսի... յիշեալիք զառաջնորդ սուրբ ուխտիս զտէր Թումայ հայրապետն մեր եւ ինձ մեղապարտ գրչիս սատանունս Կարապետ արեղայիս...» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Խապայեանի Երուսաղէմի հայ. Ձեռագրաց ցուցակէն Թ. 1669): Այս յիշատակագրութիւնը կարեւոր է այն տեսակէտով որ Գոմքի Ս. Գէորգի հնադոյն յիշատակութիւնն է (Հմմտ. Վ.Վ. Գ., էջ 919):

Ս. Բարթողիմէոսի վանքի մէջ 1680ին Սահակ Վանեցի Եսայի վարդապետի առաջնորդութեան ժամանակ Աւետարան մը կը ծաղկէ ու կը կազմէ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ. էջ 567):

Վարդի մէջ 1519ին Ատոմ՝ Համանուն առաջնորդին բաղձանքի ընդառաջելով ծառայ. մը կը նորոգէ (Արարատ, 1915, էջ 1115): Հոն 1536ին Մարգարէ Արճիշեցիին Աղբքսանդրի վարքը կ'արտագրէ, իսկ 1569ին Կիրակոս եւ Յովհաննէս մէկական Աւետարան կը գրեն (Բարխուդարեան Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 10 եւ 312):


Վարդի մէջ անկէ յառաջ 1444ին «ի յառաջնորդութեան տէր Յովհաննիսի» Զաքարիա վարդապետը Աւետարան մը կը գրէ (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Խապայեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. ցուցակէն Թ. 1858):

Արճէշի Չորոյ վանքի մէջ 1306ին կը գրուի Ներս. Լամբրոնացիի Պատարագի մեկնութիւնը (Հմմտ. նոյնի հրատարակութեան — Վենետիկ 1847 — յառաջարանը):

«Ի քաղաքս Արճիէ ընդ հովանեաւ Պատերազմի սուրբ Նշանիս» ՊՂ թուին կը գրուի ծառայիք (Առ. Դաւրիթ. Պոմ. էջ 417): Իսկ ՊԿ թուականին Յովհաննէս Երէց «Սպասաւոր եւ ծառայ Վասիլ թագաւորի Պատերազմի Ս. Նշանին» կը ստանայ «Պատերազմի Ս. Աւետարանը» (Մճրատեան, Երնջակ, էջ 232):

Մկրտիչ արեղան Պոռի Ս. Յովհաննէսի վանք մէջ 1645ին կը սկսի գրել Շարակնոց մը, զոր անոր մեռնելէն յետոյ Բարեձորի Ս. Աստուածնի մէջ Յովսէփ Տատկցի կը շարունակէ (Ա.Կիրնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատակարանաց, Երուսաղէմ՝ Սաւանարեանի ցուցակէն):

Ս. Աստուածածնի անապատի մէջ Յակոր 1551ին Յակոր առաջնորդի հրամանով Յովհ. Մանդակունիի ճառերը կ'արտադրէ (Սարգիսեան Հ. Բ. Քննադատութիւնք Յ. Մանդակունեոյ... Վենետիկ, 1895, էջ 196): — Սոյն անապատի առաջնորդ եղած է Ահարոն վարդապետը (Արարատ, 1869, էջ 295):



Ագուլիսի Ս. Թովմասի վանքը

«Ի վանս Կոճերաց» ՊԿԴ թուին կը գրուի «Մեկնութիւն Առակաց Սողոմոնի» — երկ՝ Ն. Լամբրոնացիի (Prinz Max, Herzog zu Sachsen, հրատ. Nerses von Lampron... Erklärung der Sprichwörter Salomo's, I. Teil, Leipzig, 1919, էջ X):

Արտադրի Ս. Թադէոսի վանքի մէջ 1570ին Տէր Ստեփանոս եւ Տէր Յովհաննէս Հայրապետներու ժամանակ՝ կը գրուի Աւետարան մը, որ Tiedmann H. գրավաճառին մօտ 1800 գերմ. մարդի ծախու հատուած էր (ծանօթ ինձ՝ Tiedemannի մէկ նամակէն):

Ձեռագիրներու արտադրութեան աւուանի վայրեր կ'ըլլան մասնաւորաբար Կառուցի, Լիմի, Վարագի, Ագուլիսի Ս. Թովմասի, Մաղարդայ, Մեծոփի, բայց մասնաւոր Աղթամարի վանքերը: Արտադրողները կամ գրիչները կը ջանան «ստոյգ» եւ «ընտիր» օրինակներու վրայէն արտադրել եւ այն ընթերցանելու ու մաքուր գրով յարգել

մաղաղաթի կամ թղթի վրայ: Ստէպ Իրենց զրքերը գեղեցիկ նկարներով կը դարձաբերեն եւ երեւան կու դան իրբեւ հոյակապ մանրանկարիչները: Թէեւ բնական տկարութիւններ զանոնք կը տառապեցնեն՝ «Յոտից մինչեւ ցզլուի չիք առողջութիւն» (Լաւայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ. Ի, էջ 193, 518, 869, 880), աչքերը իրենց տեսողութեան կարողութիւնը կը տուժեն (անդ, էջ 446, 1040), ձեռքերը կը դողդողան (անդ, էջ 124, 146 եւն), տարիքի ծանրութիւնը կը ձնչէ (անդ, էջ 620, 728), քաղաքական անպատ արարումներ — «գառն եւ վշտաշատ» — արամադրութիւն ու հանգիստ կը խոռվեն ու կը բառնան եւ նոյն իսկ կը ստիպեն պանդխտութեան դիմել (անդ, էջ 124, 146, 227, 229 եւն) եւ այն երբեմն «ի դարկաութեան՝ ի դրունս աւտարաց, որ հացն՝ լեղի, ջուրն՝ արիւն <sup>61</sup>» (անդ, էջ 674): Սակայն անոնք — հայ աննկուն գրչագիրները — ինչպէս Հայաստանի միւս նահանգներու, նմանապէս Վասպուրականի մէջ իրենց արտադրութիւնները կը սկսին յուսով, կը շարունակեն անդու եւ կ'աւարտեն ուրախութեամբ: Երբեմն՝ սոյն արտադրութիւնները հարկաւոր էին օրապահիկին իսկ ճարտար համար: Բայց ստէպ՝ օգտակար դիտութեան մշակումի եւ եկեղեցական պաշտամունքի եւ արարողութեան: Եւ այս անվատ աշխատանքի եւ կորովի շնորհիւ օժտուեցան, ճոխացան ու հարստացան եկեղեցիները, վանքերը, հասարակութիւններն ու անհատները: Վասպուրականի վանքերու մէջէն մասնաւոր Լիմի, Կառուցի, Աղթամարի, Վարագի, Ս. Թովմասի, Մեծոփի <sup>62</sup> եւ Մաղարդի վանքերը ձեռագիրներով հարուստ էին: Թէեւ 1895—1896ի դժբախտ շրջաններուն կարելի կ'ըլլայ անոնցմէ կարեւոր մաս մը թաքստոցներու մէջ պահել, սակայն մեծ Եղեռնի առեւն անոնցմէ միայն փոքրիկ մաս մը հնարաւոր կ'ըլլայ փրկել ու գերծուցանել, մնացածը թալանի ու կրակի կ'ենթարկուի (Արարատ 1883, էջ 539, 1898, էջ 400, 1903, էջ 176, 1914. էջ 766 1915, էջ 863—864, 1917, էջ 193—198, Նոր Հոսանք, 1914, էջ 573, Ա-դօ՝ Վանի,

<sup>61</sup> Հմմտ. մանրամասնօրէն Վարդանեան Հ. Ա., Հայ գրչագիրները ինչ պայմաններու տակ կ'ընդօրինակէին հայ ձեռագիրները, Վիեննա 1924:  
<sup>62</sup> Կառուցի թէ Մեծոփի առաջնորդ մը (Սարգիս) «Մ. գրքը նորոգեաց եւ եք ի սուրբ ուխտն» (Վ.Վ., Բ., էջ 421 եւ 441):

Բիթլիսի եւ Երզրումի վիլայէթները, էջ 58, Վան—Տոսպ. 1907, Թ. 6, էջ 7—8, Թ. 8, էջ 8—10, Մուրճ. 1903, Թ. 4, էջ 146, Տաթեւ տարեցոյց, 1926, էջ 260, Սիոն, 1870, էջ 266):

Արտադրի Ս. Թադէոսի վանքի Ձեռագիրներու ցուցակագրութիւնը լոյս տեսած է «Արարատ»ի 1911—1915 տարիներու հատորներու մէջ, ինչպէս եւ «Ազգ. Հանդէս»ի մէջ (1904, ԺԲ, Բ. էջ 766):

Լաւայեան է որ կը յօրինէ՝ «Յուցակ հայերէն Ձեռագրաց Վասպուրականի» հրատ. Հայոց աղբիւն. Ընկերութեան, Պրակ Ա. 1915, Թիֆլիս: Դժբախտաբար Լաւայեանի գործը լիապէս դեռ չէ հրատարակուած՝ «Ամբողջ աշխատութիւնը ներփակելու է առ նուազը 2000 ձեռագրերի նկարագրութիւն, նրանց յիշատակարանները եւ ծանօթութիւնները լիակատար ընդօրինակութիւնով...: Առանձնապէս ուշագրաւ է լինելու վերջին պրակը, որ ամփոփելու է անտիպ ժամանակագրութիւններ, Աղթամարի կաթողիկոսութեան, Կարնոյ եւ այլն պատմութիւնները» (անդ, Ազգ, էջ 5): Այս գործը կարելի է ենթադրել որ՝ Վասպուրականի վանքերու պատմութեան համար ինչպիսի առատարուի աղբիւր կրնար ըլլալ եւ մեր գրութեան կատարելագործութեան որքան պիտի նպաստէ:

(Շարունակելի): ԳԿՏ. 2. 2. ՈՍԿԵՍՆ

**ՆՈՐ ԿՏՈՎԱՐՆԵՐ ԳՐԳԵՐՈՒ ԿԱՐԳԸ ՀԵՅՈՑ ՔՈՎ**

(Շարունակութիւն):

Աւետարան եւ առաքելականիք (τὰ εὐαγγελικά καὶ τὰ ἀποστολικά) դանազանութիւնը նոր կտակարանի գրքերու մէջ շատ հին է եւ գործածուած կը գտնենք արդէն Բ. դարուն <sup>63</sup>: Այս բաժանումին ծանօթ են նաեւ մեր թարգմանիչները: Եզնիկ Մարկիոնը կը մեղադրէ. «այնչափ յանդգնեալ սատանայական ոգւովն մինչեւ... զկէս աւետարանի

<sup>63</sup> Իդնատիոսի առ Փիլ. 5, առ Ձմիւռն. 5, 7, Ե. 700 եւն: Իրենէսի ընդդէմ Հերմուած. 1, 3, 6, Ե. 477, Կղեմէս Աղեքսանդրացոյ Ստրոմատ 7, 3, 16, Թ. 417, 532:

ընտրել աւնուլ, նոյնպէս եւ գառափախական քրդոսն <sup>60</sup>: Շատ նշանակալից է Եզնիկի այս յառաջընթացն մէջ, առաքելական քուրթ-բ բացատրութիւնը, որուն տակ թղթերը (նամակները) միայն չի հասկնար, այլ Գործք Առաքելոցն ալ կը ներփակէ, որովհետեւ Մարկիոնը կը մերժէր նաեւ զայն <sup>61</sup>: Եզնիկի այս կոչումէն կը հետեւի նաեւ, թէ Հայոց նախնական ցուցակներուն մէջ, առաջին տեղը կը գրուէին Աւետարանները:

1. Աւետարան: Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս. այս է յունարէն ձեռագիրներուն մէջ տիրող կարգը, այսպէս ունին նաեւ միւս թարգմանութիւնները. փչչիթոյ եւն ընդհանրապէս <sup>62</sup>: Այս է նաեւ Քրիստոնէութեան ընդհանուր կարծիքին համաձայն աւետարաններու գրութեան ժամանակագրական կարգը <sup>63</sup>: Տարբեր խմբաւորում մը անձանօթ է հայ հին ձեռագիրներուն <sup>64</sup>:

Ուշագրութեան արժանի է այս կարգը, որովհետեւ հայ աւետարաններու թարգմանութեան բնագրին ստուգման կրնայ նպաստել: Ուսուցչապետ Macler <sup>65</sup> հայ թարգմանութեան իբր բնագիր կը համարի գլխաւորաբար D (= Codex Bezae) ձեռագրախումբը: Դժբախտաբար չէ հասած մեր ձեռքը Թ. դարը կանխող Աւետարանի ամբողջական հայ բնագիր մը, որ կարենայինք աւելի մօտաւոր եզրներով կատարել համեմատութիւնը, բայց զարմանալի կը թուի, երբ D ձեռագրին մէջ կը տեսնենք Մատթէոս, Յովհաննէս, Ղուկաս, Մարկոս յորդորութիւնը <sup>66</sup>: Ինչո՞ւ չէ ընդգրկած հայր այս կարգը թարգմանութեան ժամանակ, եթէ այսպէս էր իր հիմնական բնագիրը: Ուրեմն. կա՞մ փոփոխած է նա զայդ՝ հետեւելով ընդհանուր աւանդութեան, եւ կամ փնտռելու ենք աւելի հաւանական երեւոյց ուրիշ կարծիքներ: Lyonet Յիսուսեանի գիտ-

<sup>60</sup> Եղծ Աղանդոց, Վենետիկ ՌՄՀԵ, Գ. 12, էջ 253:  
<sup>61</sup> Zahn, Gesch. II. էջ 585:  
<sup>62</sup> Zahn, Gesch. II. էջ 367: Հմմտ. Վարդանեան Հ. Ա., Եւսեբիոսի առ Կարգիւնոս թուղթը: Յաւելում եւթադի, էջ 215:  
<sup>63</sup> Եւսեբիոսի Եկ. Պատմ. 2, 25, Գ. 24: Gregory, Einleitung in das N. T. II. 824; Zahn, Gesch. II. 365.  
<sup>64</sup> Մակուս, էջմիածին, Մլէք, Վիեննա 171:  
<sup>65</sup> Le texte arménien de l'Évangile d'après Matthieu et Marc, Paris 1919.  
<sup>66</sup> Zahn, Gesch. II. էջ 376: